

ՋԵՌՔ ԿԸ ՄԵԿՆԵՄ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ

ԿՐԸԸ ԺՈՒՄՊԼԱԹ

Երեսփոխան Ուալտեր Ժոմպայթ երկվ յայտարարեց, որ «Մալիբա» չարաշնորհներին տուած իր հարցազրույցին մէջ ոչ մէկ դիտաւորութիւն կար անձնական անարգանք կամ նախատինք ուղղելու հանրապետութեան նախագահին, եւ իր խօսքերը սխալ մեկնարանուած են, որովհետեւ անոնք պարզ եւ ընդհանուր նկատողութիւններ կ'են:

Ժոմպայթ մաղթեց, որ իր յայտարարութեան յաջորդած հակազդեցութիւնները չհասնին անձնական ընդդիմադրութիւններին: Ան նաեւ մաղթեց, որ հանրապետութեան նախագահը վերջ տալ յայտարարանալէ ճին: Ժոմպայթ ըսաւ, որ ձեռքը կ'ըմբռնէ նախագահ Էմիլ Լահուտի, երկիրը վերականգնելու համար, եւ ողջունեց մշակութիւնը նախարարութեան կողմէ Պէյրութի պալատի վերանայնաւորումը:

ՍԱՅՏԱՅԻ ԳԸՐԱՅԷ ԳԻՒՂԻՆ ՄԷՋ՝ ՈՃՐԱՅԻՆ ԱՐԱՐԸ

Սալտայի արեւելքը գտնուող Գըրայէ գիւղին մէջ, նախանցեալ գիշեր վիճակներ մուտք գործեցին սուփրումարքեր մը եւ կրակ բացին հոն գտնուողներուն վրայ՝ վիրաւորելով չորս հոգի: Գիւղին բնակիչները Շաբաթ օր նստացոյց մը կատարեցին. մասնակցութեամբ նախարար Միշէլ Մուսայի. երեսփոխաններ Մուսթաֆա Սաաութի եւ Պահիա Հարիրի: Սալտայի միւլթի շէյխ Մոհամէտ Ժալալտտինի, շէյխ Մոհամէտ Հասան Ամինի, Սալտայի մարտիներու առաջնորդ Թանիս Խուրիի եւ Ժամաս Խալալտայի քաղաքական գրասենեակի նախագահ Ալի շէյխ Ամարի: Անոնք արտասանեցին խօսքեր՝ դատաւարտելով արարքը եւ ընդգծելով համակեցութեան, համերաշխութեան ու միասնականութեան պահպանման անհրաժեշտութիւնը, հաստատելով, որ այսպիսի արարքներ կը փորձեն ներքին հարցեր ստեղծելով ծառայել Իսրայէլի:

Ապահովութեան հարաւի շրջանային խորհուրդը նոյն օրը Հարաւի նահանգապետ Ֆալալ Սալէի գլխաւորութեամբ ժողովի մը ընթացքին քննարկեց դէպքը եւ որդեգրեց շարք մը միջոցառումներ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՏՃԻՏ ՆԱԽԱԳԻԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վարչապետ Սելիմ Հըս Շարաթ օր նախագահեց տրեսական ու դրամական հարցերու նախարարական յանձնախումբի ժողովին, ապա յայտարարեց, որ յանձնախումբը չարունակած է 1999ի պետական պիտոնէի նախագիծի քննարկումը եւ երկրորդ ժողով մը պիտի գումարէ յառաջիկայ Շարաթ օր, յոյս յայտնելով, որ այդ ժողովին յանձնախումբը կ'աւարտէ նախագիծին քննարկումը:

Հըս Շարաթ օր կատարած իր յայտարարութիւններուն մէջ գտնուողութիւնը յայտնեց օտար դրամանիշով ու յատկապէս Եւրոյով հրապարակուած պետական պարտատուներու գտած ընդունելութեան համար յայտնելով, որ այդ պարտատուները գնողներուն 60 առ հարիւրը Լիբանանի չիրանկիր. բան մը, որ ցոյց կու տայ, թէ միջազգային չիրանկները մեծ պտահութիւն ունին Լիբանանի նկատմամբ եւ գալն կ'ընկալեն հաւաստի պարտատէր:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ադաւնի Կիրակոսեան
Օրդ. Անի եւ Լարա Կիրակոսեաններ
Տէր եւ տիկին Գեղամ Կիրակոսեան
Տիար Գրիգոր Կիրակոսեան
Օրդ. Մանուէլ Կիրակոսեան
Տէր եւ տիկին Սիմոն Կիրակոսեան
Տէր եւ տիկին Գեղորդ Գեղորդեան
Տէր եւ տիկին Տիգրան Կիրակոսեան
Տէր եւ տիկին Յակոբ Կիրակոսեան
Եւ համայն ազգականներ կ'ընկերանան իրենց ամուսնուն, հօր, եղբոր, հորեղբոր եւ հորազգանին:

ԱՐԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շարաթ, 20 փետրուար 1999, առաւտեան ժամը 9ին:

Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը՝ Շարաթ, 20 փետրուարին, Թրիփոլիի Ս. Զոգեպալատեան եկեղեցւոյ մէջ:

Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:

ՄԱՀԱԶԴ

Տիար Տրդատ Արանեան
Տիկին Վիքթորիա Արանեան
Տիար Րաֆֆի Արանեան եւ գաւակունք
Օրդ. Սիլվա Արանեան
Տէր եւ տիկին Հայկ եւ Ռիթա Արանեան եւ գաւակունք
Տէր եւ տիկին Կարօ եւ Մատթէ Արանեան
Տէր եւ տիկին Արշակ եւ Ալիս Արանեան
Տիկին Արաքսի Գալանճեան
Տիկին Մաթենիկ Եսափունեան
Հոգեւորական ընտանիք
Եւ համայն ազգականներ կ'ընկերանան իրենց քրոջ, հօրաքրոջ եւ հորազգանին:

ԶԱՊԷԼ ԳԱՍԱՊԵԱՆԻ (ՏԵՆԱՂ՝ ԱՐԱՆԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Մոնթէլայի մէջ, Հինգշաբթի 18 փետրուարին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 22 փետրուար 1999, Մոնթէլայի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ:

• Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:

ՔԱՇԱԼԵԻ ՄԷՋ ՇԻՆԳ ՅԱՐԿԱՆԻ ՇԵՆՔ ՄԸ ՓՈՒԼ ԵԿԱԻ

Քաշալէի մէջ հինգ յարկանի շէնք մը փուլ եկաւ Շաբաթ գիշեր. իր փլատակներուն տակ թաղելով բնակիչներն ու շէնքին մօտ կանգ առած ինքնաշարժի մը մէջ գտնուող երկու հոգիներ՝ սպաննելով չորս հոգի եւ վիրաւորելով վեց ուրիշներ: Քուէ Քաշալէի Մար Անթոնիոս եկեղեցիին դիմաց գտնուող շէնքը փուլ գալով՝ նաեւ փակեց Պէյրութ - Պէքաա մայրուղիին մէկ մասը:

Դէպքէն անմիջապէս ետք, վայրը փութացին բանակի, ներքին ապահովութեան ու քաղաքային պաշտպանութեան ու կարմիր խաչի խումբեր, ինչպէս նաեւ Քաշալէի եւ շրջակայքի զինուորացիներն ու բնակիչներէն կամաւորներ: Մըրդը գիշերը անընդհանրապէս նախկուեցան փրկութեան աշխատանքները:

Նախագահ Էմիլ Լահուտ երէկ կէսօրէ առաջ այցելեց դէպքին վայրը, ծանօթանալու

փրկութեան աշխատանքներուն ընթացքին, իսկ հանրօգուտ աշխատանքներու եւ փոխադրանքներու նախարար Նաժիպ Միքաթի անձամբ հետեւեցաւ աշխատանքներուն: Դէպքին վայրը այցելեց նաեւ առողջապահութեան նախարար Քարամ Քարամ, որ հիւանդանոցներու մէջ այցելեց վիրաւորներուն՝ հաւաստելով, որ նախարարութիւնը պիտի հոգայ անոնց դարմանումին ծախսերը:

Վարչապետ Սելիմ Հըս Գահիրէէն հեռաձայնեց փոխ վարչապետ Միշէլ Մըրի եւ տեղեկացաւ պատահածին մասին:

Նախարար Միքաթի երէկ յայտարարեց, որ իր նախարարութիւնն ու ապահովութեան տարբեր ուժերը, ինչպէս նաեւ անհատներ անհրաժեշտ բոլոր մեքենաներն ու սարքերը տրամադրած են փլատակները վերցնելու համար:

ՀԸՍ ԳԱՀԻՐԵԻ ՄԷՋ...

Շարունակում Ա. Էջէն

Են եւ կ'ընթացան շնորհիւ երկու երկիրներուն միջեւ ազատ առեւտուրի գոտիի ստեղծման համաձայնագրի գործադրութեան քայլերուն, ըսաւ նախարարը:

ԽՈՒՊԱՐԱՔԻ ՀԵՏ

Վարչապետ Հըս երէկ Նոր Եգիպտոս շրջանի նախագահական պալատին մէջ տեսակցութեան մը ունեցաւ Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաֆի հետ, ներկայութեամբ Ժանգուրի, Եգիպտոսի վարչական բարձրագոյն պաշտպանները, որոնք Եգիպտոսի նախագահի հետ շարունակեցին իրենց խորհրդակցութիւնները:

Տեսակցութեան ետք կատարած իր յայտարարութեան մէջ, Հըս ըսաւ, որ Առնուն գիւղը բնակչութեամբ զուարթ գոտիին կցելով՝ Խորալ կ'ընկալէ իր անջ յայտարարութիւններուն, որ կ'ընկալէ իր ուժերը հեռացնելու համար: Ան յայտնեց, որ Մուսարաֆին խնդրած է միջամտել մեծ պետութեանց մօտ, որպէսզի ձեռնարկեն ներքին խառնակութիւնը:

Վարչապետը ըսաւ, որ Լիբանանի համարտարբեր բաներ են իսրայէլեան ուժերը հեռացնելու ուժերը: Հըս ըսաւ, որ Լիբանանի համարտարբեր բաներ են իսրայէլեան ուժերը հեռացնելու ուժերը: Հըս ըսաւ, որ Լիբանանի համարտարբեր բաներ են իսրայէլեան ուժերը հեռացնելու ուժերը:

425 որոշումը իսրայէլեան ուժերուն Լիբանանէն հեռացումին ոչ նախապայմաններ կ'ընդհանրեն, ոչ ալ խաղաղութիւն:

Վարչապետ Հըս տեսակցեցաւ նաեւ Արարական Լիկայի ընդհանուր քարտուղար Իսմաէլ Ապտի Մեկիտի հետ: Այս վերջինը վերահաստատեց Լիկայի անվերապահ գորակցութիւնը Լիբանանի եւ իսրայէլեան իշխանութեանց միջազգային դիւանագիտական շարժումին, որուն միջոցով պէտք է լուծուի Առնունի հարցը:

Միւս կողմէ, Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ամր Մուսան ալ վարչապետ Հըսի հետ տեսակցելու ետք ըսաւ, որ Եգիպտոս կ'ընդունուի Լիբանանի ինքնագրաւեալ գոտիին կցումը, որ կ'ընկալէ Խորալի տրամադրութիւնները, թէ չուզէր գործադրել թիւ 425 որոշումը:

ԾԱԽՈՒ

ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

• Պուր Զամուտ, Կիլիկիան դպրոցի բաղ: Հեռ. 01 - 254187 կէսօրէ ետք ժամը 4ին ետք:

ԿՈՒՋՈՒԻ

• Ջորջոս քար գամող վարդապետ Կիլիկիան: Հեռ. 03 - 459360:

ԾԱԽՈՒ

ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

• Պուր Զամուտ, Նոր Կիլիկիան բաղ: Հեռ. 03 - 398548:

ԾԱԽՈՒ

ԳԵՏՆԱՅԱՐԿ

(ԹՎ ՓՈՒՅՈՎ)

• Կիլիկիան բաղի մէջ, գործատեղի կամ մ'երթանք յարմար: Հեռ. 03 - 265761 եւ 01 - 267230:

ԳՐԱՌՈՒԱԾ ՕՐ

30 ԱՊՐԷԼ 1999
ԶԱՆԻ ԾԵՐԱՆՈՅ

«ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ»ՈՒՄ
ՃԱՇԿԵՐՈՅԹ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ ԱՄՐԱՊԵԳԵԼ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲՈԼՈՐ ՇՐՋԱՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ԿՐԸԸ ՄՅԵՅՐ

Մարտիներու Մար Նասրալա Պուրոս Սֆէյր պատրիարքը երէկ Պէրքէի մէջ հանդիսապետեց պատարագին, ապա արտասանեց քարոյ մը, որուն մէջ ըսաւ, թէ անցած շաբթուան ընթացքին պատահած են անսխալորդ դէպքեր եւ յայտարարուած են անսխալորդ կեցութեանք: Ան յիշեց Առնուն գիւղը բնագրաւեալ գոտիին կցելու քայլը, պատահանաւորներու միջեւ բանալիէն անսխալորդութիւններու փոխանակումի աստիճանին հասնիլը, լիբանանեան բառապատկերին մէջ «քաղաքական անվտանգութիւն» հասկացողութեան ներմուծումն ու անկէ սպասելի անակնկալներն ու ընտրութեանց օրէնքին մասին վրոյցները:

Սֆէյր նաեւ անդրադարձաւ Քրայէ գիւղի դէպքին եւ նկատել տուաւ, որ անհրաժեշտ է ապահովութիւնը ամրապնդել լիբանանեան բոլոր շրջաններուն մէջ, բայց մասնաւորաբար հոն, ուր գաղթականութիւն պատահած էր եւ գաղթականները տուն դարձած էին՝ հաստատելով համակեցութեան:

ՄԵԿԱՅՈՑԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ՊԵՅԹԵՏՏԻՆԻ ՊԱԼԱՏԸ

Մշակույթի, կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Մուհամէտ Եուսէֆ Պաշտուն յայտարարեց, որ մշակույթի նախարարութիւնը այսօր պիտի վերստանան Պէյրութի պալատը երեսփոխան Ուալտեր Ժոմպայթի ենթակայ վարչութեան:

Ան ըսաւ, որ այս քայլին նախաձեռնած էր Ժոմպայթ, եւ յանձնումը պիտի կատարուի բարեկամական միջնորդի մէջ:

Տեղեկատուական աղբիւրներ ըսին, որ բանակի եւ ազատութեան ուժերուն յաւելեալ շնչատեղեր նախանշեալ պիշեր արդէն առաքուած էին Եուսէֆ, որ կ'ընթացային առկա պարտաւորութիւն պայտատի ստանձնումին:

ԱՐՅԱԽԸ ՊԵՏԻ ԱՌԵՏՈՒՐԻ...

Շարունակում Ա. Էջէն

Ան կ'աւելցնէ, թէ Արցախին կարելի է նաեւ ինքնապաշտպանութիւնը շնորհել՝ պայմանով, որ Արցախի իշխանութիւնը իրենց իշխանութեան տակ դնելով:

Արցախի համաձայն, Ռուսիա եւ արեւմտեան երկրները նաեւ կ'ընդունան Արցախի տագնապին մէջ Իրանին միջնորդի դերակատարութիւնը յանձնելու առաջարկին:

Արցախ յանձնի մէջ ՕԹԱՆի խորհուրդը հաստատելու հարցով՝ ան կ'ընկալէ, թէ կառավարութիւնը պէտք է պիտակցի, որ ՕԹԱՆ յատուկ կապեր ունի Ռուսիայի հետ եւ շատ հաւանաբար գտնուի վտանգի տակ պիտի չզննէ, որ հաջորդեալ համար Արցախ յանձնի կարիքները:

Ան նաեւ կ'ընդունի միջնորդի համաձայնագիրներուն առեւծի դերակատարութեան ընկերութեանց շնորհելու Պաշտունի որոշումը, որուն հետեւանքով Արցախի ճան ՕԹԱՆի ազդեցութեան գոտիին մէջ սկսած է մտնել:

ՔՈՐՆՈՒՔՈՎ

ԿԸ ՄԱՏՆԱՆՇԷ ...

Շարունակում Ա. Էջէն

Ռուս հրամանատարը տեսակցութեան մը ունեցաւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանի հետ, ապա բարձրատիման սպաներու ներկայութեան, նշուեցան առաջնական «ՄԻԿ-29» սղանաւորու առաջին «փորձնական թռիչքները»: Քորնուքով «պատմական պահ» որակեց օրը, իսկ Վազգէն Սարգսեան՝ «հրաշալի օր»: Յիշեալ սղանաւորը յառաջիկայ ամիս պիտի սկսին իրենց կանոնաւոր թռիչքներուն, հսկելու համար Հայաստանի սղային տարածութեան:

ԼՕԽԻ «Ա. ՊՈՒԼԴՈՒՐԵԱՆ» ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ

• Տարբ. Ջաքարիա Մկրեանի մահուան առիթով. Տարբ. Բիւզանդ Հալաբեան 50.000 լ. ՏԵՐ եւ տիկին Արաքսի Վանեան 50 Տ

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Վանայ Ջալը կարիքը ունի ծանուցումի մարզին մէջ աշխատող երիտասարդ - երիտասարդուհիներու:

Ժամադրութեան համար կապուելի 01 - 241199 եւ 03 - 337025 թիւերուն:



Հ.Մ.Ը.Մ. ԺՏԵՑԵԻ ՄԱՍՆԱԺԻԴ

ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ յայտօր՝ Երկուշաբթի, 22 փետրուար 1999, երեկոյեան ժամը 8ին Մար Եուսէֆի Լ.Ս.Խ. Կանախի մասնաճիւղի ակումբի սրահին մէջ:

ՄԱՆՍԹ. - Մեծամասնութիւնը չգոյնացաւ ուսարգային ժամը 8:30ին ներկայութեան թիւը մեծամասնութիւնը պիտի նկատուի:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԻՐԱՔ Կ'ԸՍԷ, ԹԷ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՕԳԱՆԱԻ ՄԸ ՎԱՐ ԱՌԱԾ Է

Իրաք երկկ յայտարարեց, որ վար առած է արեւմրտեան ուժերուն պատկանող օդանաւ մը, որ հսկողու-թեան թուիչք կը կատարէր հարաւային «արցիլեայ գօտի»ին մէջ: Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա հերքեցին Իրաքի յայտարարութիւնը:

ԻՆԱ լրատու գործակալութիւնը հրապարակած էր բանակին կողմէ կատարուած յայտարարութիւնը, որ կը յայտնէր, թէ իրաքեան ուժերը ձախողութեան մատնած են թշնամական փորձ մը: «Իրաքեան հակօդային հրթիռները յաջողած են ուղղակի կերպով հարուածել եւ վար առնել թշնամի ուժերուն օդանաւերէն մէկը», աւելցուց ԻՆԱ:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութիւնը հերքեց իրաքեան լուրերը՝ յայտարարե-լով, որ ամերիկեան բոլոր օդանաւերը վերադարձած են իրենց խարխախները:

ԵՐԿՐՈՒՇԱՐԹԻ, ՄԱՊԷՆՈՒԹԻՒՆԸ
ԻՐԱՔԻ ԴԷՄ ԴԱՒԵԼԳՐՈՒԹԵԱՆ, ՄԱՍ ԿՐ ԱԶՍԻ:

Իրաքեան «ժու՛մնուրխ» օրաթերթը երկէ հաղորդեց, որ շիւր կրօնապետին եւ անոր երկու գաւակներուն սպանութիւնը մաս կը կազմէ Իրաքի դէմ սարքուած դաւադրութեան, որուն նպատակն է խուսովութիւններ հրահրել երկիրէն ներս: «ժու՛մնուրխ»ի խմբագրակա-նը կը նշէր նաեւ, որ կրօնապետին եւ անոր երկու որդի-ներուն սպանութիւնը ձախող փորձ մըն էր՝ երկիրին ներքին ապահովութիւնը խախտելու:

Սպաթոյա Մոհամէտ Սատիք Սատր եւ անոր գաւակ-ները սպաննուեցան Ուրրաթ օր: Իրաքի իշխանութիւն-ները շայտնեցին սակայն, թէ ո՛ր կատարուած է սպա-նութիւնը: ԻՆԱ հաղորդեց, որ Սատրը սպաննողներէն քանի մը հոգի ձերբակալուած է:

Անին Այաթոլլա Սատր շիւ համայնքի մեծազոյն կրօ-նապետներէն մէկը կը նկատուի: Սատր հարաւային Նա-ժաֆ քաղաքէն էր, շիւներու սրբազան քաղաքներէն մէկը: Անոր Ուրրաթ օրուան քարուքներուն մեծ թիւով իրաքիներ կը հետեւէին:

Սատրի սպանութեան լուրին յայտարարութենէն ետք, Սի. էն. էն. հաղորդեց, որ Պաղտատի Սատտամ թաղա-մասին մէջ Շարաթ օր լախումներ տեղի ունեցած են ցուեցոյցներու եւ ապահովութեան ուժերուն միջեւ: Սի. էն. էն.ի հաղորդած լուրին համաձայն, զոհեր ին-կած են այդ բախումին: Իրաք հերքեց Սի. էն. էն.ի հաղորդած լուրը՝ գայն սխալ եւ անհիմն յայտարարե-լով: Սի. էն. էն. աւելցուց, որ Իրաքի իշխանութիւնները փակած են թաղամասը՝ արգիլելով լրագրողներուն մուտքը: Յոյցն ութ ժամ ետք միայն, թաղամասը բաց-ւած է եւ իրաքցի պաշտօնատարներու ընկերակցու-թեամբ լրագրողները մտած են վերոյիշեալ թաղամասը, ուր ամէն ինչ խաղաղ էր ու անոյրոր: Պաղտատի «Սատ-տամ Սիթի» շրջանին մէջ կ'ապրին մօտաւորապէս եր-կու միլիոն շիւներ: Իրաքի 22 միլիոն բնակչութեան 65 առ հարիւրը շիւի է:

ԻՐԱՆ ԿՐ ՄԵԳԱԼԳՐԵ ԻՐԱՔԸ

Իրան երկէ մեղադրեց Իրաքը Այաթոլլա Սատրի սպա-նութեան համար՝ ղլխոյ տալով, որ անիկա մաս կը կազմէ շիւի համայնքին դէմ ծրագրուած հայածանքի արշաւին:

Իրանի հոգեւոր պետազոյն ղեկավար Այաթոլլա Ալի խմենէի հրապարակեց յայտարարութիւն մը, որ կը ղատապարտէր Սատրի եւ անոր որդիներուն սպանու-թիւնը: Խմենէի աւելցուց, որ Իրաքի շիւի համայնքը կազմակերպուած ու ծրագրուած հայածանքի կ'ենթարկու-ւի անցնող քանի մը տարիներուն ընթացքին: Այդ հա-յածանքը հասած է գազաթնակէտին, ըսաւ Խմենէի, որ չեչտեց, թէ Իրան Սատրի սպանութեան պատասխա-նատուն կը նկատէ Իրաքը, որ հաշիւ պիտի տայ ամբողջ աշխարհին եւ յատկապէս՝ իսլամական երկիրներուն:

Իրանի պատկերասփուռի կայանը հաղորդեց, որ Սատրի եւ Պաղտատի իշխանութիւններուն միջեւ կա-պերը վատթարացան վեց ամիս առաջ, երբ շիւի երկու կրօնաւորներ սպաննուեցան Իրաքի մէջ: Կայանը աւել-ցուց, որ Իրաքի իշխանութիւնները Սատրի եւ անոր գաւակներուն ղիակները թաղեցին՝ անոնց սպանութեան լուրը յայտարարելէ առաջ:

●ՅՈՐԴԱՆԱՆԻ ապահովութեան ուժերը երկէ ցրր-ւեցին ցոյց մը, որ կազմակերպուած էր, իրեւ ըողոք Սատրի սպանութեան դէմ, յայտնեցին ականատետներ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԸՈՍՈՒՄՈՅԻ ՏԱԳՆԱՊ

ՈԱՄՊՈՒՅԵԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ ԺԱՄԿԵՏՈ՝ ՄԻՆՉԵՒ ԵՐԵԶԱՐԹԻ ՅԵՏՄԻՋՈՒԷ

ՌՈՒՍԻԱ ԴԷՄ ՕԹԱՆԵԱՆ ՀԱՐՈՒԱԾԻ

ՕԹԱՆԵԱՆ օդանաւերը երկէ շարունակեցին ահա-գանգային վիճակի մէջ մնալ՝ եուկոսյաւ թիրախ-ներու դէմ հաւանական հարուածներու համար, մինչ Ռամպուշի մէջ Քո-սովոյի խաղաղութեան բա-նակցութիւնները, որոնք Շարաթ օր երկարածըգ-ւած էին, աւելի եւս թափ կը ստանային:

Ռուսիոյ վարչապետ Եւ-պենի Փրիմաքով երկէ լա-ւատեսութիւն արտայայ-տեց ինչ կը վերաբերի սեր-պերու եւ քոսովոցի այգա-նացիներու միջեւ համա-ձայնութեան մը գոյացու-մին: Ռուսիա անդրողունի-օրէն հակադրուած կը մնայ սերպաւան թիրախներ ուժ-րակոծելու արեւմտեան գինակցութեան սպանա-լիքներուն՝ եթէ Պելկրատ մերձէ Քոսովոյի գծով հա-մաձայնութիւն կնքել:

Մ. Նահանգներու ար-տաքին գործոց նախարար Մատրլէյն Օլպարաթ երկէ Ռամպուշի Օլպարաթ երկէ արտայայտեցին համոզել փորձելու համար, որ ըն-դունին ինքնավարութեան համաձայնութիւն մը, որ իրենց անկախութիւն է երաշխաւորել:

Այդ պարագային Մ. Նա-հանգներ պիտի կարենան Սերպիոյ վրայ իրենց ճնշ-ւումներուն աւելի եւս թափ տալ, որպէսզի ընդունի ՕԹԱՆԵԱՆ շուրջ 30 հազար գինուորներու Քոսովոյի մէջ հաստատումը, եթէ հա-մաձայնութիւն մը գոյա-նայ:

Նկատի ունենալով, որ անցեալ Շարաթ կէսօր-ւան ժամկէտին Ռամպու-շի մէջ համաձայնութիւն էր գոյացած, Յարաբրա-կան խմբակին ցանդամե-րը որոշած էին ժամկէտը երկարաձգել մինչեւ Երեք-շարթի յետմիջօրէ:

Ամերիկացի բարձրաս-

տիճան պաշտօնատար մը յայտնեց, թէ Ուաշինկթոն

հակակայք, որ սերպերը խաղաղութեան ամբողջա-կան համաձայնութիւն մը ընդունին՝ ներառեալ Քո-սովոյի մէջ ՕԹԱՆԵԱՆ ու-ժերու հաստատումը:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ռուպին Քուք երկէ ըսաւ, թէ Քո-սովոյի այգանացիները պոուչպուած են, որ եթէ խաղաղութեան համաձայ-նութիւն մը չընդունին, անհաւանական է, որ ՕԹԱՆ անոնց սերպ թշնա-միները ուժակոծէ:

Ան յայտնեց, որ «բացա-նշիկ նուաճում» մըն է, որ Պելկրատ համաձայնու- (ՌՈՅԹԸՐԸ)

ՓԱՔԻՍԱՆ ԵՒ ՅԵԴԱՍԱՆ ՈՐՈՇԵՑԻՆ ԵՒ ԹԱՓԵԼ ԲԱՇՄԻՐԻ ՏԱԳԱՊԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԼԱՀՈՒ. 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Փաքիստան եւ Հնդկաստան կիրաքի օր որոշեցին յաւելալ ճիգի գործ դնել լուծելու համար Քաշմիրի տագնապը: Անոնք նաեւ յայտարարե-ցին միջոցառումներ, որոնք կը միտին մեղմացնել լար-ւածութիւնը եւ նուազեցնել կորիւլային պատերապի մը հաւանականութիւնը:

Յայտարարութիւնը կատարուեցաւ երկու երկիրնե-րուն վարչապետներուն միջեւ տեղի ունեցած գերաս-տիճաւի մը աւարտին: Գերաստիճաւը, իր կարգին, աւ-նախընթաց էր, որովհետեւ առաջին անգամ ըլլալով Հնդկաստանի վարչապետ Աթալ Գեհարի վաճախի ցաւ-մաքային սահմանագիծէն անցնելով Փաքիստան մտաւ՝ բացուած յայտարարելով Նիւ Տէյիի - Լահոր օրոպիւսի գիծը: Վաճախի Շաբաթ օր սահմանը անցաւ առաջին օրոպիւսով:

Վաճախի եւ Նաուալ Շարիֆ ըսին, որ բոլոր հարցե-րուն լուծումը կ'ենսական է շրջանին մէջ խաղաղու-թեան եւ ապահովութեան համար: Երկու ղեկավարնե-րը, թէեւ իսստացան գործակցի լուծելու համար հար-ցերը, բայց եւ այնպէս դիտել տուին, որ այս հանդիպու-մին կարելի էր նուաճում մը արձանագրել ձամու - Քաշմիրի տագնապին գծով՝ նկատի ունենալով, որ անիկա աւելի քան կէս դարէ ի վեր ծայր տուած փշոտ տագնապ մըն է, որ քանիցս ալ պատերապմներ պատ-ճառած է սահմանակից երկու երկիրներուն միջեւ:

Այլ հարցերու գծով որդեգրուած միջոցառումներուն մասին խօսելով՝ անոնք ըսին, որ Հնդկաստան եւ Փա-քիստան համաձայնեցան զիրար անաօք տեղեակ պա-հել միջցամաքամասային հրթիռներու փորձարկումնե-րու թուականին մասին. ինչպէս նաեւ իրարու անմիջա-պէս լուր տալ անախկալ դէպքերու մասին:

Շարիֆ Շաբաթ օր սահմանագիծին մօտ դիմաւորեց առաջին օրոպիւսն ու վաճախին: Երկու վարչապետ-ները աւելի ուշ ուղղաթիռով մը Լահոր մեկնեցան: Պաշ-տօնական ընթրիքի մը ընթացքին երկու ղեկավարները ցաւ լսալունեցին, որ Փաքիստան եւ Հնդկաստան աւելի քան կէս դար կորսնցուցած են պատերապմներով եւ լուծումներ չեն գտած տագնապներուն:

ԻՐԱՆԻ ՄԵՋ

ԿԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ ՋՕՐԱԿԻԳ ԿԱԼԳԵՈՂ ԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ ՍԸ՝ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ

Կ'ԸՍԷ ՆՈՒՐԻ

ԹԵՂԱՆ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Նախագահ Մոհամէտ խաթեմիի չափաւորական դաշնակիցները Կիրակի օր բացուած յայտարարեցին Իրանի քաղաքապետական առաջին ընտրութիւններուն արշաւը՝ նշանարան ունե-նալով «սիրոյ իսլամութիւն մը» նախադասութիւնը:

Ներքին գործոց նախկին նախարար Ապտալա Նուրի, որ բարեկարգումներ պահանջող շարժում մը կը ղեկա-վարէ, ընտրապայքարի հաւաքի մը ընթացքին ըսաւ, որ կը մերժէ իշխանութիւնը իրենց ձեռքերուն մէջ պահե-լու պահպանողականներուն ճիգը, որուն ճամբուն վրայ կ'աղաւաղեն իսլամութեան իմաստն ու կիրարկումը:

Նուրի ըսաւ, որ չափաւորականները իսլամութիւնը կը մեկնարանեն, իրրեւ սիրոյ եւ բարեկամութեան իս-լամութիւն եւ ոչ թէ՛ իրրեւ կասկածի իսլամութիւն: Ան աւելցուց, որ չի կրնար ընդունիլ իսլամութիւն մը, որ կ'արգիլէ հանրային հաւաքները, գօրավիգ կը կանգնէ կ'աղաւաղեն իսլամութեան իմաստն ու կիրարկումը: Նուրի ըսաւ, որ չափաւորականները իսլամութիւնը կը մեկնարանեն, իրրեւ սիրոյ եւ բարեկամութեան իս-լամութիւն, յո՛ւք կը սխալիք: Եթէ այս է կրօնքը, ուրեմն մենք գայն չենք ընդունիր», յայտարարեց Նուրի Թեհ-րանի համալսարանէն ներս կազմակերպուած ընտրա-կան հաւաքին:

Իրանի քաղաքապետական ընտրութիւնները տեղի պիտի ունենան Փետրուար 26ին: Իսլամական յեղափո-խութենէն եւ իսլամական հանրապետութեան հիմնադ-րութենէն ի վեր, առաջին անգամ ըլլալով Իրանի մէջ քաղաքապետական ընտրութիւններ տեղի պիտի ունե-նան: Չափաւորական խաթեմի եւ անոր հետեւողները կ'ուզեն յաղթանակ ապահովել այս ընտրութիւններուն, որպէսզի արագացնեն բարեկարգումները՝ հակակշիռի տակ առնելով պահպանողականներուն ազդեցութիւնը: Մեկնարաններ, իրենց կարգին, դիտել կու տան, որ քաղաքապետական ընտրութիւններուն արդիւնքը պի-տի արտացոլայ յաւաքիկայ տարուած երեսփոխան-կան ընտրութիւններուն: Իրանի խորհրդարանին մէջ մեծամասնութիւն կը կազմեն պահպանողականները:

Միւս կողմէ, իրանեան ատենա մը նիստի մը հրաւի-րեց կրօնաւոր մը, որ գօրավիգ կը կանգնէ նախագահ Մոհամէտ խաթեմիի: Կրօնական հարցերու ատենաը երեք ժամ հարցաքննեց Մոհսէն Քատիւարը, որ մամու-լին միջոցով քննադատած է կրօնաւորներուն տիրապե-տող ներկայութիւնը Իրանի կառավարութեան մէջ: Հար-ցաքննութեան ընթացքին, Քատիւար շեշտած է, որ իրան-եան օրէնքին համաձայն, ինք պէտք է հարցաքննուի հանրային ոչ կրօնական ատենաի մը կողմէ, ուր իրա-ւունք կ'ունենայ նաեւ պաշտպան փաստաբանի մը:

●ԻՐԱՆԻ Գերագոյն Ատենաը ջնջեց գերմանացի գոր-ծարարի մը դէմ յայտարարուած մահապճիւր եւ հարցը փոխանցեց Թեհրանի արդարադատութեան մարզին՝ նոր դատավարութիւն մը կատարելու համար: Գերագոյն ատենաը յայտնեց, որ բաւարար փաստ չէ գտած հաս-տատ պահելու համար մահապճիւրը: Գերմանացիին դէմ մահապճիւր արձակուած էր իսլամ կնիք մը հետ սեռային ապօրինի յարաբերութիւն մը ունեցած ըլլալուն հա-մար:

●ԻՐԱՆ մերժած է մուտքի արտօնագիր տալ Միացեալ Նահանգներու նախկին նախագահ Ճիմի Քարթրիի տղուն՝ Ճէյմսի, որ կը ծրագրէր բարեկամական այցե-լութիւն մը տալ իսլամական հանրապետութիւն:

«ԼՈՔԸՐՊԻՐ ԴԱՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ»

«ԹՐԻԲՈՒԼԻ ՉԻ ԿՐՆԱՐ ԹԻՐԱՆ ԴԱՌՆԱԼ ԴԱՏԱԽԱԶՆԵՐՈՒՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ»

ԹՈՒՆՈՒԶ. 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Լիպիա Կիրաքի օր ծիսադէլի գտաւ այն ենթադրութիւնները, թէ Թրիփոլիի կառավարութիւնը կրնայ թիրախ դառնալ Լոքըրպիի դատավարութիւնը կատա-րող դատախապներուն հարցումներուն:

ԺԱՆԱ լրատու գործակալութիւնը վարմանը լսալունեց, որ լրատուական ցանցեր տակաւին կը հաւատան, թէ Լիպիա ունի այլ ընկերութիւններու նման վարչակարգ մը, որ շուտով կրնայ վտանգուիլ: Լիպիոյ ժողովրդային կառույցը շատ աւելի գօրաւոր է քան որեւէ այլ կառույց աշխար-հի վրայ եւ հետեւաբար չի կրնար տկարանալ եւ կարիքը չունի որեւէ ձեւի, կամ ունէ մեկուն պաշտպանութեան:

ԺԱՆԱ կ'ակնարկէր ՄԱԿի ընդհանուր քար-տուղար Քոֆի Անանի Լիպիոյ ուղարկած մէկ նամակին, որ երաշխիքներ կու տար Թրիփոլիի, թէ Հոլանտայի մէջ տեղի ունենալիք դատավա-րութիւնը թիրախ պիտի չդարձնէ Լիպիոյ կառա-վարութիւնն ու վարչակարգը:



ԵԹԷ ՈՒՆԻՍ 300.000 Լ.Ո. ԼԱԻ Է ՈՐ ՀԱՆԳՍԱՆԱՍ

Ամէն ամիս կրնաս ըլլալ 1 միլիոն 1.ռ. շահող 25 մասնակիցներէն մէկը. երբ կը քանաս **STAR** հաշիւը «Քրետի Լիպանէ»ի մէջ:

Պէտք ունիս միայն 300.000 Լ.ռ.ի (200\$) եւ մէկ հաշուեցոյցի (քիչայիցի). ելեկ-տրականութեան. հեռաձայնի կամ ինքընքեթի. որ ուղղակիօրէն գանձուի դրա-մատնային հաշիւէդ. կրնաս ձրի գործածել նաեւ BankerNet/ Visa Electron քարտ:

STAR հաշիւը քեզի կը տրամադրէ նաեւ՝

ԲԱՐՁՐ ՏՈՎՈՒՆԵՐ

24 ԺԱՄՈՒԱՆ ՄԷՋ ԳՈՒՄԱՐԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ

ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆ. ՈՒՐ ՈՐ ԱԼ ԳՏՆՈՒՄ

Յաւելեալ մանրամասնութեան համար այցելէ մեր 47 մասնաճիւղերէն մէկը կամ հեռաձայնէ ժամը 8էն 6 հետեւեալ թիւին:

01-217171



الاتحاد اللبناني
CREDIT LIBANAIS

Միշտ Ձեր Մօտ

www.creditlibanais.com.lb

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Եւրոի Լուսնայի գլխաւորութեամբ Մոսկուայի պատ-
ւիրակութեան Հայաստան ժամանումը Հայաստանի
առողջապահութեան ոլորտին համար արդիւնաւէտ
դարձաւ: Փոխ նախարար Արմէն Աթաբեկեան յայտա-
րարեց, թէ Հայաստանի առողջապահութեան նախարա-
րութեան եւ Մոսկուայի առողջապահութեան կոմիտէին
միջեւ համագործակցութեան համաձայնագիր մը ստո-
րագրուեցաւ: Փոխ նախարար Հաղորդեց, որ Մարտին
Մոսկուա կը մեկնի Հայաստանի առողջապահութեան
նախարարութեան պատուիրակութիւնը, եւ այնտեղ պի-
տի ստորագրուին համագործակցութեան փաստաթուղ-
թեր:

Իսկ 16 Փետրուարին տեղի ունեցաւ առողջապահու-
թեան նախարարութեան հետ կապուած հարցերուն
«կլոր սեղանը»: Նախարար Հայկ Նիկողոսեան անդրա-
դարձաւ դեղերու գիններուն, անվճար բուժումի, ինչ-
պէս նաեւ առողջապահութեան հիմնարկներուն մէջ շա-
խատոյններու թուականներու դասաւորման, ապահո-
վագրական թշկուութեան:

Հարկ է յիշել, որ վերջերս Լոնտոն գացած էր նախա-
րար Հայկ Նիկողոսեան, Առողջապահութեան Համաշ-
խարհային կազմակերպութեան հրաւերով: Նիկողոսե-
ան մասնակցած է խորհրդակցութեան մը, որուն մաս-
նակցած են Անգլիոյ, Հայաստանի, Սլովակիոյ եւ Նորվե-
կիոյ առողջապահութեան նախարարներն ու կազմա-
կերպութիւնները, ինչպէս՝ Համաշխարհային դրամատու-
նը, Եւրոպայի Ներդրումներու դրամատուներ, անգլիա-
կան առողջապահութեան եւ տնտեսագիտութեան դպ-
րոցները:

Խորհրդակցութիւնը «Առողջապահութեան դիտա-
րան» կոչուող նոր միջազգային կազմակերպութեան
առաջին միջոցաւումն է:

Այս նոր կազմակերպութիւնը պիտի համակարգէ եւ-
րոպական երկիրներուն մէջ իրականացուող առողջա-
պահական ծրագիրները:

Հայաստանի նախարար Հայկ Նիկողոսեան այդ
խորհրդակցութեան գեկուցում մը տուած է, որ հետա-
քորքութեան արժանացած է տարածքի առողջապա-
հութեան կազմակերպումին տեսակէտով:

Իսկ Լեւոնային Լարարադի Հանրապետութեան առող-
ջապահութեան նոր նշանակուած նախարար Վլատիմիր
Սահակեան 16 Փետրուարին Երեւանի մէջ հանդիպեցաւ
Հայաստանի առողջապահութեան նախարար Հայկ Նի-
կողոսեանին հետ: Այդ հանդիպումին մանրամասնու-
թիւնները հաղորդելով Արցախի առողջապահական նա-
խարար յայտարարեց, որ բոլոր կարելիութիւններն ու
հարաւորութիւնները կան, որպէսզի Հայաստանի եւ
Լեւոնային Լարարադի առողջապահութեան նախարա-
րութիւնները սերտօրէն գործակցին եւ միասնաբար նոր
ծրագիրներ մշակեն ու իրականացնեն:

ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ 1700ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Տէճ 7 Փետրուարին Ս. Լ. շմիածինի մէջ տեղի ունե-
ցաւ միջթեմական ընդհանուր ժողով, նախաձեռնու-
թեամբ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական
կրօն հոշակման 1700ամեակի տօնակատարութիւննե-
րու կեդրոնական մարմինն, նախագահութեամբ գոր-
ծադիր մարմինի վարիչ-քարտուղար Մարտիկ արք.
Աշոտեանի եւ Վահագնայի թեմի առաջնորդ, 1700ամեա-
կի ուխտագնացութեան կեդրոնական մարմինի ան-
դամներ Յովնան արք. Տէրտէրեանի, որ կը վարէր ժո-



ղովին միասնաբար:

Ընդհանուր ժողովին մասնակցած էին հայ առաքե-
լական եկեղեցիի Հայաստանի եւ Սփիւքի թեմերու
առաջնորդներ, հոգեւոր եւ աշխարհական ներկայա-
ցուցիչներ, հայ եկեղեցւոյ երիտասարդական եւ ուս-
նողական միութիւններու անդամներ:

Նիստին բացումը կատարուեցաւ աղօթքով, որմէ
ետք վեհափառի փոխանորդ Ներսէս արք. Պողոսյա-
նի խօսք տուաւ: Ապա Մարտիկ արք. Աշոտեան հիւսիս-
ձեւով ներկայացուց 1700ամեակի ծրագիրով նախա-
տեսուած աշխատանքները եւ անոնց ընթացքը: Ան
յատկապէս նշեց ուխտագնացութեան դերը: Որմէ ետք
Հայաստանի Հանրապետութեան յուշարձաններու
պահպանութեան վարչութեան կողմէ Յակոբ Սիմոն-
եան ներկայացուց 2001 թուականին Հայաստանի եւ
Արցախի մէջ կազմակերպուելիք ուխտագնացութիւն-
ներու վարչութիւնը եւ կարգ մը հարցեր ու դժուարութիւններ:

Իսկ երիտասարդական ուխտագնացութեան նախա-
գիծի կապակցութեամբ եղաւ քննարկումներ եւ շարք
մը առաջարկներ, որոնք հետագային պիտի վերահաս-
տատուին:

Որոշուեցաւ կատարել հրատարակութիւններ, որոնք
ոչ միայն ուղեցուց պիտի ըլլան հանդիսատեսին, այլ
նաեւ պիտի օժանդակեն ուխտագնացութեան ընթաց-
քին արտոգրական աշխատանքի: Լուսարկուեցաւ նա-
եւ քարոզական գրականութեան հրատարակութիւն-
ներ կատարել:

Իսկ Լորուսաղէմի ներկայացուցիչ Լուսաղէմ արքեպի-
սկոսի ներկայացուց Լորուսաղէմի հայոց պատրիարք Թոր-
գոմ արք. Մանուկեանի պատրաստականութիւնը, հո-
գալով 1999ին Ապրիլի 7-14 Լորուսաղէմի մէջ կայանա-
լիք ուխտագնացութեան հայաստանցի մասնակիցնե-
րուն կեցութեան եւ սնունդի ծախսերը:

Ջրօսաշրջութեան հաշիւական ընկերակցութեան
ներկայացուցիչ Լիւսիոյ Սեպեմեան ներկայացուց ծրա-
գիր մը, որ կ'առաջարկէր հովանաւորներու հիշական
աշխատանքներ կազմել երիտասարդ կամաւորներու
խումբեր, որոնք աշխատանքը պիտի ըլլայ բարեկար-
գել եւ մաքրել պատմական յուշարձաններն ու իրա-
կից մասերը, որպէսզի 1700ամեակի առիթով Հայաս-
տան ժամանող հիւրերուն անոնք ներկայանան պատ-
շաճ վիճակով:

Ժողովի եզրափակիչ միասնաբար Մարտիկ արք.
Աշոտեան ժողովի քննարկման ներկայացուց երկու ծրա-
գիր: Առաջինը կը վերաբերէր՝ Մշտ Ս. Կաթողիկոս-
նի ներկայացուցեալ տեղեւորներ, որուն նպատակը պիտի
ըլլայ 1700ամեակի առիթով ուխտագնացութեան ոգին
վերակենդանացնել, երկրորդը կը վերաբերէր 1700ա-
մեակին առնչուող կարեւոր ուրիշ ձեռնարկի մը՝ Լոր-
ուսի Մարտիկ շրջակային ծառատունկին եւ Տրդատ թագա-
ւորի անուանով անտառի մը ստեղծումը:

Ներկայացուեցաւ նաեւ ուխտատրի անցագրի մոմ-
20:

7 Փետրուարին ժողովականները Լ. շմիածինի մէջ
մասնակցեցան Ս. պատարագին: Պատարագիչն էր
Յովնան արք. Տէրտէրեան:

Ժողովին եզրափակիչ հանգրուանը Լորուսի Մարտիկ
էր, որ ուխտի գացին ժողովականները:

ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան ընդունման
1700ամեակն է, մինչ այդ կ'աւարտի Կոտայքի մարզի
Մարտիկ քաղաքին մէջ գտնուող Լորուսի կաթողի-
կոսական վերականգնութեան կեդրոնը:

Եկեղեցական համայնքին մօտ կառուցուած են հոգե-
ւոր դաստիարակութեան կեդրոն եւ շարք մը մշակու-
թային կառուցանքներ:

Կոտայքի առաջնորդ Առաքել եպս. Կարապետեան
յայտնած է, որ 1999 տարեշրջանին կը նախատեսուի
վերականգնել 1828ին աւերուած եկեղեցիներուն գրմ-
րէթերը: Իսկ 2003 թուականին պիտի աւարտին նաեւ
Բջնիկ Ս. Սարգիս եւ Ս. Աստուածածին եկեղեցիները,
ինչպէս նաեւ՝ Գառնիի մէջ գտնուող Մարտիկ հայրապե-
տի եկեղեցին եւ Մարտիկան վերականգնման աշխա-
տանքները:

ՏՐԱՆՍԱՅԻ ԵՐԱՌԵՆԻՔԻ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԽՈՒՄԱՓՈՆ ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՐՈՒՆ

Հաղորդած էինք, թէ
Ֆրանսայի ֆուլթայի ազ-
գային խումբի աստղերէն
Եւրոի ճորքայէք ճամակ-
ներ յղած էր Ֆրանսայի
վարչապետին եւ Օբա-
կոյտի նախագահին, ա-
նոնցմէ խնդրելով, որ զօ-
րակցին Հայկական ծե-
ղապանութեան ճանա-
չումի օրինակով քայլին:

«Ամերիկայի Չայն»
կայանին համաձայն,
վարչապետ Լիոնէլ ժոս-
փէն ցարդ չէ պատասխա-
նած ճորքայէքի ճամակ-
կին, իսկ Օբալոյտի նա-
խագահը իր պատասխա-
նին մէջ ըսած է. թէ ծե-
ղապանութեան բանա-
ծելի վաւերացման հար-
ցը օրակարգի վրայ պի-
տի դրուի այն ատեն, երբ
կատարուելիքը փա-
փաքի. այս առնչու-
թեամբ ինք դիմած է
վարչապետին ու կը սպա-
սէ անոր պատասխանին:

Խորհրդարանին մէջ
կատարուելիքն են
կայացուցիչը ըսած է. թէ
կատարուելիքն են
հարցը ծագած է Օբալոյ-
տի իմաստութեամբ:

Ըստ երեւոյթի, Ֆրան-
սական իշխանութիւննե-
րը «Եւր» կացութեան
մատուցած են ծեղապա-
նութեան ճանաչման
հարցով, ու իշխանու-
թեան երկու թեմերը ի-
րաքանցիկը կը փորձէ
պատասխանատուութիւ-
նը ցետել միւսին վրայ:

ՌՈՒՄԻՈՅ ԲԵՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԿԱՐԵՄԻՍԻ ԹՂԹԱԿԻՅ ՍԵՂԱՍ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԼԵՅՍ ՍԿԱՍԵԱՆ

Ռուսիոյ մանկաբար-
ձութեան եւ կիներու հի-
ւանդութեան գիտական
կեդրոնի ղեկավարներէն
փրոֆ. Լ. Լ. Արապեան
Ռուսիոյ մշակական Գի-
տութիւններու Ակադե-
միայի թղթակից անդամ
ընտրուեցաւ:

Լ. Արապեան հեղինակն
է միջազգային ճանաչու-
ման շարք մը գիտական
մեծագործութիւններու, ո-
րոնցմէ յատկանշականն
է «Սկարեմիայի հիւանդու-
թեան պրոֆիլակտիկա»,
«Փոքր կրնի օրկաններին
Լիւսկրաֆիա» մեծագոր-
ծութիւնները:

Արապեան մասնակցած
է նախագահած է բազմա-
թիւ միջազգային գիտա-
ղովներու:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ 70 ՏԱՐԻՆԵՐԸ

ԶԱՀԱԿԻՆԵՐՈՒ ԵՐԹՈՎ

Սփիւքի մշակութային թէ կրթական կազմաւոր-
ման հետ ծնած ու ծաղկած Համազգային կրթական եւ
Մշակութային Միութեան տարիներուն (1999) թուա-
կանին եւս կը շարունակենք տօնել այս Միութեան 70ամե-
ակը: Աշխարհով ցրուած մեր գաղութները արժանա-
ւոր շուքով պիտի տօնեն (արդէն իսկ սկսած են տօնա-
կատարութիւնները՝ տարբեր գաղութներու մէջ) Հա-
մազգայինի հարուստ վաստակը: Դիւրին չեղաւ ա-
շուշտ ճանապարհը Համազգայինի, մանաւանդ՝ իր հիւ-
նադրման սկզբնական տարիներուն, 1928 թուականին
սկսեալ: Իր ընաշխարհէն արտահանուած, բնագաղթի
ենթարկուած հայութիւնը ի մի համայնքներու միակ
միջոցը հայ դպրոցն ու հայ մշակոյթի պահպանումն էր:
Համազգայինի երախտաշատ հիմնադիրները՝ Նիկոլ Աղ-
բաբեան, Լեւոն Շանթ, Գասպար Իրիկեան եւ միւս
նուիրեալները յաւ գիտէին, թէ տարագիր հայուն փր-
կութիւնը կարելի պիտի ըլլար միայն հայ լեզուին, հայ
պատմութեան եւ հայ արժէքներու պահպանումով: Եթէ
հայ եկեղեցին հոգեւոր տրամադրութիւններուն ճարտ-
հայուն հաւատքը պահպանեց, Համազգայինը, իր կար-
գին, բարձր բունեց ջանք հայ մշակոյթին, որ յուսա-
րեց ուղիւ հայ երաժշտութեան, հայ թատերական ար-
եստին, հայ գրականութեան, հայ գեղարուեստի բոլոր
մարգերուն:

Եւրոյ 70 տարիներու հեռաւորութենէն, երբ յետա-
դարձ ակնարկ մը նետենք ստեղծուած Համազգայինա-
կան համակարգին, պիտի տեսնենք գաղութի գաղութ
սփռուած ծաւալուն ԳՈՐԾԸ, որ փրկութիւն եղաւ հայ
դիմագիծի ու ինքնութեան պահպանման: Եթէ յուսա-
միտ հիմնադիրները չունենային տեսիլքը՝ հայ մշակու-
թով ներշնչուելու եւ անով յարատեւելու, եթէ չունենա-
յին կամքը տոկայուն անձնութիւն կամ ճակատագրին
բերելիք անակնկալներուն, պիտի չհասնէինք ներկայի
սա հարստութեան, որ Համազգայինը ինքն է իր կենսու-
նակութեամբ, Արեւելքէն Արեւմուտք, Եւրոպայէն մի-
ջեւ հեռաւոր Ամերիկաները, մինչեւ Քանադա ու Աւստրա-
լիայ:

Իր ապրած 70 տարիներուն ընթացքին Համազգային-
ըն հսկայական ներդրում ունեցաւ մեր կրթական կեան-
քին բարձր մակարդակով ծաղկումին, մեր թատերա-
կան շնչաւորումին հետեւողական ուժին, մեր գրական
անդամներին վկայ՝ իր հրատարակական տուններին
յոյս տեսած հատորները, տպագրական վաստակը:

Եւրոսիոյ Համազգայինի կերտած սերունդներուն, այ-
սօր սփիւքով մէկ տարածուած հայ մարդու միջոցով
դիմագիծի հեծուկն ամէն տեսակի ձեռնարկ մտանգնե-
րուն, կը շարունակէ հայր Հայ պահպան հիմնական աշ-
խատանքները, իր մասնաճիւղերուն մէջ գործադրուած
հաւատաւոր հայորդիներու նուիրումով:

Կեանքի ու ճակատագրի պայմաններու միջոցով հա-
լածած են մեզ, համայն հայութիւնը. Համազգայինը չէ
կրնար խուսափիլ գաղութներուն վիճակուած դաւաճ-
ղի պայմաններէն, ճակատագրական անցուղ արժեքն:

Եթէ տեղ մը նկատուեցաւ ակամայ թուրութիւն, տեղա-
կան վերականգնումներու բերումով, Համազգայինը հոն
եւս չըլեցեց արգելքներու եւ ստեղծեց այնպիսի հրաշա-
լի պատկերներ, իրագործեց նուաճումներ, գործ կրնա-
տենք նախանձելի. վկայ՝ Հայկ եւ Մեթաֆիզիկ Արապե-
ան ճեմարանի ստեղծումն ու շքեղ կառույցը ու այս
Լորաների երկարամեջ քանդիչ պատերազմի ընթաց-
քին, անոր յուսալիք տեւողութեան: Այս պարագան կը
նշենք յատկապէս իրեւ իրանաշահայ:

Հիւսիսային Ամերիկայի, Քանադայի, Ֆրանսայի մէջ
Համազգայինը նոր թափ տուաւ իր գործունէութեան
գեղարուեստի բոլոր մարգերը ծաղկեցնող հետեւող-
կան շնչով: Մարտիկ ճեմարանը եղաւ փրկութեան
փարոս մը Եւրոպայի այդ շրջանի հայ գանգուածին
համար:

Եզրապետին ճամբայ ելած ու համայն Սփիւքի մէջ
տարածուած իր կրթական թէ մշակութային ցանցով
Համազգայինը եղաւ ամուր կուռն ու անխորտակելի
բերդ՝ ձուլող հոսանքներու եւ հայու հոգիին ընկնող
բոլոր մարտահրաւիրներու կամ փորձութիւններու դէմ:
Այսօր, երբ կը նշուի Համազգայինի 70ամեակի ան-
հուն երախտագիտութեամբ կ'ոգեկոչենք իշխանութիւն
անոր հիմնադիրներուն, յաջորդ սերունդներուն, որոնք
տիւ եւ գիշեր ձէթ մատակարարեցին Համազգայինի
Յահիւն անմար րոյցին՝ իրենց անձր վերածած յուսա-
լիքներով:

Համազգայինը պիտի շարունակէ իր յաղթական եր-
թի, Սփիւքի մէջ, Հայաստանը ունենալով իրեն ուղե-
կից, գորակից, որպէսզի միացեալ գործութեամբ կարելի
ըլլայ հանել իմաստագրական նպատակներ, որ ընաւ «տկա-
րութիւն պիտի չհանջնայ»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ

ՏՈՔԹ. ԹԵՏ ԶԱՂԼԱՍԵԱՆ ԱԹԷՆՔԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՍ

Տօքթ. Թէտ Չաղասեան ծնած է Պէյ-
րութ եւ համալսարանական իր ուսումը
ստացած է Պէյրութի Ամերիկեան համալս-
արանին մէջ: Մասնագիտացած է վիրա-
բուժութեան ճիւղին մէջ, ապա մեկնած է
Անգլիա, ուր հետեւած է փլասթիք վիրա-
բուժութեան մասնագիտութեան, ուրկէ
անցած է Նիւ Եորք:

1977ին Նիւ Եորքի մէջ եղած է հիւան-
դանոցի իր բաժանմունքի պատասխանա-
տուն:

1993ին ի վեր կը պաշտօնավարէ Քո-
լումբիա համալսարանին մէջ՝ իրրեւ
բժշկութեան դասախոս եւ վիրաբուժ:

Փետրուարին տօքթ. Թէտ Չաղասե-
ան Յունաստանի համալսարանի պա-
տուիչ անդամ հռչակուեցաւ: Տեղի ունե-
ցաւ ակադեմիայի պատուոյ անդամի հռչ-
չական արարողութիւն: Իր մասին ար-
տասնուած խօսքերէն ետք, հայ եւ յուն
հասարակութեան ներկայութեան յաջոր-
դեց զգեստաւորման արարողութիւնը,
որմէ ետք տօքթ. Թէտ Չաղասեան ներ-

կայացուց իր նիւթը: Ան վիրաբուժական
իր ճիւղի մասին խօսած ատեն լիչեց նաեւ
Հայկական Յեղասպանութիւնը: Օրինա-
կով մը լիչեց փլասթիք վիրաբուժութեան
մասնագէտներէն տօքթ. Վարապետ Գա-
գանճեանին անունը, որ գործած է Հա-
մաշխարհային Բ. պատերազմին եւ աշ-
խատած է Ֆրանսայի գիտնութեան հի-
ւանդանոցին մէջ. ան առաջին անգամ օգ-
տագործած է «փլասթիք» վիրաբուժու-
թիւնը՝ ասացուածքը՝ ընտրելու համար
այս մասնագիտութիւնը:

Տօքթ. Թէտ Չաղասեան իր խօսքին մէջ վեր-
աւերեց նաեւ հին Յունաստանի բժշկու-
թեան հայրը համարուող Իփոքրաթիւսի
ուխտի սկզբունքները՝ նշելով, որ ան
բժշկութիւնը վերածեց գիտութեան եւ յա-
րողեցաւ գիտութիւնը կրօնէն գատորո-
շել:

Տօքթ. Թէտ Չաղասեան իր համալսա-
րանի պատուոյ անդամի հռչակումին յա-
ջորդեց շնորհաւորութիւններուն եւ հիւ-
րասիրութեան բաժին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆԷՆ 4 ԳՈՐԾ ՎԱՃԱՌԻ ՀԱՆՈՒԹԵԱՆ

Վաճառքի պիտի հան-
ւին Մարտիրոս Սարեանի
գեղանկարչական չորս
գործ եւ հայ անուանի ու-
րիշ նկարիչներու գործեր:
Որոնք կը պահուին Հայաս-
տանի Նկարիչներու միու-
թեան ֆոնդին մէջ:

Հայաստանի Նկարիչնե-
րու միութեան նախագահ
Կարեն Աղամեան ցոյց տը-
ւաւ Սարեանի 40-50ական
թուականներու գործերէն
«Նոր փողոց Կիրովակա-
նուն», «Արարատ», «Անա-
ջին կանաչը» եւ «Թիւ 6.
տոկոսի բրիգադի Յոփի-
սիմ Կնեազեանը», որոնք
ժամանակին զնուած են
միութեան կողմ:

Սարեանը 4 գործերը եւ
միւս հայ նկարիչներու գոր-
ծերը 150 գեղանկար եւ
տասնեակ մը քանդակ, 20
Փետրուարին պիտի ներ-
կայացուին հանրութեան
«Սոցիալիստական ռէալիզ-
մի շրջան. 1940-1990 թուա-
կաններ» ցուցահանդեսին,
որ տեղի պիտի ունենայ

ՓԵՏՐՈՒԱՐԻ 18. ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԾՈՒՌ ԵՒ ՃԻՏԱԿ ՀԱՅԵԼԻՆԵՐ

1921ի Փետրուարի 18ին Յեղկոմի իշխանութեան ղէմ րարձարացուած ապստամբութիւնը համայնավարական պատմագրութիւնը ընդունշել է որպէս «աւանբւլւար» (արկածախնդրութիւն)։ Բնական է, որ համաշխարհաւոր յեղափոխութեան ցնդոթին հաւատացող եւ այդ յեղափոխութեան սալլին լծուած քաղաքական հոսանքն, իր դատապարտելի վարքագիծը եւ խախտուակ պարտութիւնն արդարացնելու, ինչպէս նաեւ՝ վերադասի առաջարդարանալու համար, պիտի փորձէր ամէն կերպ նսեմացնել, յիրաւի, այդ համաժողովրդական ապստամբութեան նշանակութիւնը, նրան վերագրել կուսակցական դիմագիծ՝ այդպիսով գրկելով ժողովրդական ակունքներից։ Ի հարկէ, կողմնակալ վերագրումներն ու ցնահատականները, ինչպէս այլ ղէպքերում, այս առիթով նույնպէս երկար կեանք չունեցան։ Պետական դիրքորոշման աստիճանի րարձարացուած կուսակցական տեսակէտները յայտ ցնդեցին կուսակցականացուած պետութեան խորհրդային Միութեան փուլգծմանը պուլսընթաց, նոյնիսկ՝ նրանից էլ առաջ եւ այսօր միայն առանձին կուսակցականներ են, որ յամաւորէն շարունակում են վանկարկել իրենց նախորդների յորինածը։ (Այնպէս, ինչպէս Հայաստանի խորհրդայնացման օրը համայնավար պատմագրութեան համար որոշում է նորմերիւմ 29ին՝ Ղազարից Բարձրանսարաւայժի՝ Իջեւան) մտած եւ մի քանի ժամ յետոյ փոխած համայնավար խմբի լաշտարարութեամբ եւ ոչ թէ մի կողմից (Հայաստանի Հանրապետութիւն)՝ Դրս, Հ. Տէրտէրեան եւ միւս կողմից (Խորհրդային Ռուսաստանին)՝ Լեգրանի միջեւ 1920ի Դեկտեմբեր 2ին կնքուած պայմանագիրով, - այնպէս էլ 1921ի փետրուարեան ընդ պզուժ կուսակցական «աւանբւլւար» է եւ ոչ թէ՛ համաժողովրդական ապստամբութիւն։

Աւանց այդ առումով վերստին կուսակցական բանավէճ նախաձեռնելու որեւէ ցանկութեան (քանզի հարցի պատասխանն արդէն իսկ տուել է ժամանակը), յիշատակենք միայն ամենայն հայոց բանաստեղծի՝ Յովհ. Թումանեանի խօսքերը, երբ մեծ բանաստեղծը թիւֆիսից, նաեւ Օրշոնիկիձէյ յանձնարարութեամբ, 1921ի Մարտի 20ին գալով Երեւան, ուսումնասիրեց իրադրութիւնը եւ, հեռագրեց թիւֆիսի. «...Ձէքը ձեռքերին միմեանց ղէմ են դուստ եկել մի կողմից՝ Հայաստանի բանուորներն ու աշխատուող ցիւղացիները, միւս կողմից՝ համայնավարների գինուած ուժերը...» (Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, 1993, էջ 575)։

Անշուշտ, ինչպէս Յեղկոմը, այնպէս էլ նրա շուրջը հաւաքուած համայնավարներն այժմօրրականայիններ չէին. հայեր էին ու ուսուներ եւ աւանձին բնակավայրերում էլ ունէին իրենց սակաւաթիւ հետեւորդները, հիմնականում՝ տնային ծառաներ, որոնց, թերեւս, ողբերում էր հաւասարութեան քարոզչութիւնը, բայց հէնց միայն եւս հանգամանքը, որ նրանք իրենց իշխանութիւնը հաստատելու աշխատարհ էլէին տեսնում, քան, ուսեական սուրինն ալաւինած, քաղաքայիական պատերազմի սանձագերծումը, արդէն իսկ նշանակում է, որ արմատներ չունէին ժողովրդի մէջ, գլխակցում էին իրենց կտրուածութիւնը հասարակութեան ոչ միայն մտաւարական (ներառեալ՝ գինուորականութիւնը), այլեւ՝ աշխատաւորական խաւից։ Հայաստանը գիւղացիական երկրի էր, չկային գործարարներ, որոնք, պաղափարական եւ ֆիզիքական միջոցներ մատակարարէին համայնավար քարոզչութեանը՝ համալրելու համաշխարհային բանուորական շարքերը։

Համայնավար պատմագրութիւնը մինչեւ օրս չի պատասխանել այն հարցին, թէ ինչու ւ քսոորուեց ընդհանուր հաշուով մօտ 1300 հայ սպայ, այդ թւում՝ հանրապետութեան բարձր գինուորականութիւնը, ինչու ւ ձերբակալուեցին Հայաստանից հեռանալ ցանկացող քաղաքական բարձր դեկավարութեան ներկայացուցիչները (նախկին վարչապետներ, նախարարներ, Խորհրդարանի անդամներ), ինչու ւ ձերբակալուեցին մտաւորականութեան եւ գինուորականութեան միջին ներկայացուցիչները։ Ի վերջոյ, ինչու ւ որոշուեց կացնահարել ու գնդակահարել նրանց։ Չէ՞ որ, եթէ ազատ արձակուէին քաղաքական բանտարկեալները, ամենայն հաւանականութեամբ, չէր լինի եւ Փետրուարեան ապստամբութիւնը։ Եթէ 1920ի Դեկտեմբերի Սից մինչեւ 1921ի Փետրուարի 18ը Յեղկոմի գործած վալլազութիւնները պարզ վրէժխնդրութեան արտայայտութիւն էին՝ ի պատասխան հանրապետութեան ուժերի կողմից մարխեան խուլութիւնները ձնշելու, ապա սխալ է այդ իրողութիւնները միեւնոյն չափանիշով դիտելը. մայիսեան խուլութիւնները հակապետական ընդվզումներ էին, այն էլ հանրապետութեան համար դժուարին մի շրջանում, երբ օրուուր աճում էր թուրքական վտանգը։ Բացի այդ, չէ որ իշխանութիւնը պայմանագիրով յանձնուել էր Յեղկոմին (եւ ոչ թէ՛ Յեղկոմն այն նուաճել էր գէնքով), իշխող կուսակցութիւնը՝ Հ. Յ. Դ. ն, իր դեկավար պետական-կուսակցական ղէմքերին հրահանգել էր հեռանալ հանրապետութիւնի՝ իր ներկայութեամբ նոր իշխանութեանը չգրգռելու նպատակով։ Համայնավար պատմագրութիւնը չի կարող ցույց տալ որեւէ փաստաթուղթ, ուր առուած լինի, որ Հ. Յ. Դ. դեկավարութիւնը, խորհրդարանական ֆիլոզոֆյան կամ կուսավարութիւնը դաւարական ծրագիր են ունեցել։

